ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար ներքին աուդիտի ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃՃՁԲ-22/05» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «06» մայիսի 2022թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արմեն Հարությունյան՝ Դատական դեպարտամենտի ղեկավար

հանձնաժողովի անդամներ՝

Խաչիկ Ղազարյան՝ Դատական դեպարտամենտի ղեկավարի առաջին տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար

Լևոն Հովհաննիսյան՝ Դատական դեպարտամենտի ղեկավարի ֆինանսատնտեսական հարցերով տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար

Ներսես Դիլանյան՝ Դատական դեպարտամենտի ղեկավարի խորհրդատուի ժամանակավոր պաշտոնակատար

Արմեն Հարությունյան՝ Դատական դեպարտամենտի իրավական ակտերի մշակման և փորձաքննության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դադիվանյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԷԱՃՃՁԲ-22/05» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

- հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հրապարակվելու օրվանից հաշված 7-րդ օրվա (04.05.2022թ.)՝ ժամը 15:00-ն,
- հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,
- էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 05.05.2022թ.՝ ժամը 15:00-ին:

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայության գնի վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության գինը՝ մեկ թվով արտահայտված.

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գնման հայտով սահմանված գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ)
1	Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտի ներքին աուդիտի ծառայություն	5721000

3. Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը (անունը)	Մասնակցի գործունեության հասցեն
Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ	Արգիշտի 7, Դոմ Մոսկվի
Ֆոր էյ Քնսալթինգ ՓԲԸ	ք. Երևան, Նալբանդյան 50/136
«Քյավառ Աուդիտ» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Նարեկացու 43
ՊԻ ԿԱ էՖ Աուդիտ Սերվիս ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 18/1, գրասենյակ 54
ՊԵՏԳՆՈՒՄՆԵՐ ՍՊԸ	Գայի 31
ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ	Ավան, Հ.Հովհաննիսյան 24/7

4. Տեղեկատվություն՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. «ԴԴ-ԷԱՃՄՁԲ-22/05» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը (անունը)	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
		Արժեք (ՀՀ դրամ)	ԱԱՀ	Գին (ՀՀ դրամ)	Արժեք (ՀՀ դրամ)	ԱԱՀ	Գին (ՀՀ դրամ)	
1	Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ	12500000	20%	15000000	3000000	20%	3600000	
1	Ֆոր էյ Քնսալթինգ ՓԲԸ	4700000	20%	5640000	3460000	20%	4152000	
1	«Քյավառ Աուդիտ» ՍՊԸ	4000000	20%	4800000	4000000	20%	4800000	
1	ՊԻ ԿԱ էՖ Աուդիտ Սերվիս ՍՊԸ	12250000	20%	14700000	12250000	20%	14700000	Մերժված
1	ՊԵՏԳՆՈՒՄՆԵՐ ՍՊԸ	14899999	0%	14899999	14899999	0%	14899999	Մերժված
1	ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ	15000000	20%	18000000	15000000	20%	18000000	Մերժված

Էլեկտրոնային հակադարձ աճուրդն ավարտվել է՝ աճուրդն ամփոփվել է 05.05.2022թ.՝ ժամը 15:32-ին և Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ-ն Համակարգի կողմից համարվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

7. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև ընկերություն) կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, բացառությամբ ընկերության կողմից հաստատված **ծառայության մատուցման առանձին տարրերի գնացուցակի** (գնացուցակի օրինակելի ձևը կցված է հրավերին):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

8. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի (հայտում առկա փաստաթղթերի)՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

8.1. ներկայացված հայտում առկա լիազորագրում նշված Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ-ի տնօրեն Ալբերտ Ասատրյանի անձնագրի սերիան չի համապատասխանում հայտով ներկայացված՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի (Հավելված 1.2) (այսուհետ՝ Հայտարարագիր) «4. Իրական շահառուի տվյալները» բաժնի «4.2. Անձը հաստատող փաստաթուղթը» ենթաբաժնի «4.2.2. Փաստաթղթի համարը» դաշտում, ինչպես նաև էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարության (Հավելված N1) 2-րդ կետի 3-րդ պարբերությամբ նախատեսված աղյուսակում նշված նույն անձի անձնագրի սերիային: Ընդ որում, հրավերի ՄԱՍ Ի-ի 4.3-րդ կետի 1)-ին ենթակետի «ե)» պարբերությամբ սահմանված է, որ դիմում հայտարարության 2-րդ կետի 3-րդ պարբերությամբ նախատեսված աղյուսակը չի լրացվում,

8.2. էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունում ընկերության գործունեության հասցեն նշված է ոչ ամբողջական,

8.3. Հայտարարագրի «4. Իրական շահառուի տվյալները» բաժնի «4.1. Անձի ինքնությունը հավաստող տվյալները» ենթաբաժնի «4.1.5. Քաղաքացիությունը» դաշտում նշված տեղեկատվությունը անհրաժեշտ է համապատասխանեցնել իրական շահառուի անձնագրում նշված համապատասխան տեղեկատվությանը:

Միաժամանակ հրավերով ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի լրացման կարգի 4-րդ կետի 7-րդ ենթակետի պահանջների համաձայն՝ հայտարարագրի «4.7. Իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկությունները» ենթաբաժնի **«4.7.3. Ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպության իրական շահառուն հանդիսանում է պաշտոնատար անձ կամ նրա ընտանիքի անդամ»** դաշտի տեղեկատվությունը վերաբերում է ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձանց, ուստի հաշվի առնելով, որ ընկերության կողմից լրացված են Հայտարարագրի «4.5. Իրական շահառու հանդիսանալու հիմքերը **(բացառությամբ՝ ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների)**» ենթաբաժնի համապատասխան դաշտերը, տվյալ դեպքում հայտարարագրի **4.7.3.-րդ** դաշտում կատարված նշումն ավելորդ է:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

- նիստը կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2022թ. մայիսի 11-ին, ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-22/05» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11-րդ կետի պահանջներով՝ հայտում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով՝ Համակարգի միջոցով ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մինչև սույն թվականի **մայիսի 10-ը ներառյալ** Համակարգի միջոցով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Արմեն Հարությունյան

Անդամներ՝

_____ Խաչիկ Ղազարյան

_____ Լևոն Հովհաննիսյան

_____ Ներսես Դիլանյան

_____ Արմեն Հարությունյան

Քարտուղար՝ _____ Գայանե Դավիթյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար ներքին աուդիտի ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-22/05» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «11» մայիսի 2022թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արմեն Հարությունյան՝ Դատական դեպարտամենտի ղեկավար

հանձնաժողովի անդամներ՝

Խաչիկ Ղազարյան՝ Դատական դեպարտամենտի ղեկավարի առաջին տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար

Լևոն Հովհաննիսյան՝ Դատական դեպարտամենտի ղեկավարի ֆինանսատնտեսական հարցերով տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար

Ներսես Դիլանյան՝ Դատական դեպարտամենտի ղեկավարի խորհրդատուի ժամանակավոր պաշտոնակատար

Արմեն Հարությունյան՝ Դատական դեպարտամենտի իրավական ակտերի մշակման և փորձաքննության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դադիվանյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-22/05» ծածկագրով ընթացակարգի շրջանակում Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման և հայտի գնահատման արդյունքի վերաբերյալ.

Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել է հայտում արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը որոշեց.

Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ ընտրված մասնակցի վերաբերյալ.

2.1. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց.

- **Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից.**

- *մյուս մասնակիցների՝ Ֆոր Էյ Քնսալթինգ ՓԲԸ-ի, «Քյավառ Աուդիտ» ՍՊԸ-ի հայտերը մերժել:*

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2.2. ՊԻ ԿԱ ԷՖ Աուդիտ Սերվիս ՍՊԸ-ի, ՊԵՏԳՆՈՒՄՆԵՐ ՍՊԸ-ի, ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ-ի աճուրդն ամփոփվելու պահին ներկայացրած գները գերազանցել են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության համար գնման հայտով սահմանված գինը, ուստի ներկայացված հայտերը eauction.armeps.am համակարգի կողմից համարվել են մերժված:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովը որոշեց՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Արմեն Հարությունյան

Անդամներ՝

_____ Խաչիկ Ղազարյան

_____ Լևոն Հովհաննիսյան

_____ Ներսես Դիլանյան

_____ Արմեն Հարությունյան

Քարտուղար՝ _____ Գայանե Դադիվանյան